այլ ազգերի մէջ իգական սեռի անուններ են, մեզնում ճիշտ հակառակը. ուստի երբ ժամանակի ընթացքում մթագնում է անցեալի յարաբերութիւնը, յառաջանում են այսպիսի շփոթութիւններ. եթէ Ֆրանկի պապը՝ Կաթոլիկ եկեղեցու կուսակրօն պետը, «աղջիկ» ունի, ինչու Զմշկիկ սուլթանն էլ կին չէր դառնայ, իսկ պարոն Աստղիկը կամ Աստղիկ թագաւորը ոգամարդ։

Մոռանալու չէ մի շատ աւելի կարևոր հանգամանք ևս։ Արդէն ասացինք, որ հիմք կար Աստղիկն Անահիտի հետ շփոթելու. աւելի ևս կարելի է այդ պնդել Նանէի համար։ Երիզայի Անահիտը համապատասխանում է Արտեմիսին, Թիլ աւանի Նանէն՝ Աթենասին[1]։ Եւ որովհետև Թիլն էլ շատ մօտ է Երիզային, ուստի «Այն կապակցութիւնը, որով Նանէն յունաց Աթենասի հետ է համեմատուած, միայն ցոյց է տալիս այսպիսով, որ նա ռազմական յատկանիշներ ունէր. ինչպէս և մօտաւորութիւնը Անահտական մի տաճարի չէ հակասում այն կարծիքին, որով նա Անահտին հնագոյն ժամանակներում էապէս նման էր»։ Այլ հիմքեր ևս կան ենթադրելու, որ Անահիտը նոյնանում է Աստղիկի հետ, երբ Բաբելացոց Անահիտ-Անատը իբրև պատերազմական դիցուհի զարդարուած և տրիծ նստած՝ գլխին կրում է Աստղիկ տարը[2], մինչդեռ Աստղիկը նոյնանում է Նանէ-Նանայի հետ[3]։ Այս նոյնացումներով միայն բացատրւում է մեր վէպի Աստղիկի ռազմական ոգին, մանաւանդ թէ արական անձն փոխակերպուելը։ Նանան և Աթենասը կրում են պատերազմական նշաններ, ինչպէս որ Արտեմիսն ևս ունի. իսկ Նանա անունը երկու սեռին ևս յատուկ է, ինչպէս և իւր պաշտամունքը տարածուած է Փոքր և Առաջաւոր Ասիայում[4]։ Արդ Եկեղեաց գաւառի սահմանակից Պերջանի Բազայարիճ գիւղում կար Մրհական[5] մեհեանը, այդ անունով երկու գիւղ այժմ էլ կան Դարանաղիքում[6],—իսկ «սպիտակափառ դիցն

1. Ագաթանգեղոս, Ե. § 490. Էջմիածին–Տփղիս։ Հմմտ. Խորեն. Բ. ԺԴ. 88. Վենետիկ 1865։

2. G. Hoffmann, Auszüge, Excurse 4, էջ 136—138, Leipzig 1880:

3. М. Эминъ. Очеркъ Религіи языческихъ Армянъ, էջ 22. Москва 1864:

4. G. Hoffmann, Auszüge, 4, էջ 157, 161:

5. Ագաթանգեղոս, ՃԺ. § 790. էջ 411. Տփղիս-Էջմիածին 1909.

6. H. Hübschmann, Altarmen. Ortsnamen, էջ 284, Strassburg 1904: Մենք մեր Զոջանց տան պատմականը երկում (Արարատ Ամս. 1908. յունուար. էջ 123—124. Արտատպ. 48—50) ցոյց ենք տուել. որ Վրաց Ամիրանը մեր Միհր—Սիրն է. Այստեղ պիտի աւելացնենք. որ նորա հօր